ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Հունիսի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի անդամներին:

Հանդիպման ընթացքում ժողովականներին Նորին Սրբությանը ներկայացրեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը՝ շեշտելով հատկապես ԵԵԿ-ի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի կարևոր առաքելությունն անդամ Եկեղեցիների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում: Ապա ներկաներին իր օրհնությունը և բարեմաղթանքը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«*Ուրախ ենք, որ 1977 թվականից մեր երջանկահիշատակ նախորդների խորագետ տնօրինությամբ Հայոց Եկեղեցին անդամ է Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի և իր գործուն մասնակցությունն է բերում Եկեղեցիների միջև փոխհասկացողության և երկխոսության հաստատման գործին*»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում: Վեհափառ Հայրապետն այս այցը նկատեց որպես ևս մեկ հնարավորություն՝ մոտիկից ճանաչելու Հայոց Եկեղեցին և նրա ներկայիս կացությունը: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև մեր ժողովրդի կյանքում հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը և հանգամանորեն ներկայացրեց Եկեղեցու առջև ծառացած խնդիրները, Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական դաստիարակության և սոցիալական ոլորտներում: Ավարտելով խոսքը՝ Ամենայն Հայոց Հայրապետը հաջողություն և արդյունաշատ ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին:

Ցուցաբերվող հոգատարության համար ներկաների անունից Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեց «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի համանախագահ տիկին Անթիե Հայդեր Ռոթթվիլմը: Տիկին Ռոթթվիլմը մասնավորաբար անդրադարձավ էկումենիկ շարժման մեջ Հայ Առաքելական Եկեղեցու և անձամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարևոր ներդրմանը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին: